

ԳԵՐ. Տ. ԳԵՎՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆ

Ավազանի անունով՝ Կարպիս: Ծնվել է 1938 թվականի օգոստոսի 29-ին Բուխարեստում:

1948 թվականին հայրենադարձվել է Հայաստան:

1956 թվականին, Երևանում միջնակարգ ուսումը ստանալուց հետո, ընդունվել է ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան, որն ավարտել է 1962 թվականին:

Գևորգ սրբազանը Մայր Աթոռում վարել է մի շարք պատասխանատու պաշտոններ. աշխատել է Մայր Աթոռի ֆինանսական և տնտեսական բաժիններում, երկար տարիներ պաշտոնավարել է իբրև Մայր տաճարին առընթեր եկեղեցական արվեստի թանգարանի վարիչ, եղել է ս. Էջմիածնի Մայր տաճարի լուսարարապետի օգնական և Վեհափառ Հայրապետի գավազանակիր:

1970—1972 թվականներին դասավանդել է հոգևոր ճեմարանում եկեղեցական տոմարագիտություն և եկեղեցագիտական այլ առարկաներ:

Տ. Գևորգ սրբազանը 1971 թվականից կազմում է Մայր Աթոռի օրացույցները:

1972 թվականի սեպտեմբերի 20-ին, Վեհափառ Հայրապետի հմր. 735 սրբատառ կոնդակով, նշանակվել է Վրաստանի հայոց առաջնորդական տեղապահ, իսկ 1973 թվականի հոկտեմբերին՝ առաջնորդ վրահայոց թեմի:

1973 թ. հուլիսին Վեհափառ Հայրապետի կողմից ստանում է ծայրագույն վարդապետական աստիճան:

1973 թվականի սեպտեմբերի 30-ին ձեռնադրվել է եպիսկոպոս՝ Ամենայն Հայոց Հայրապետի կողմից:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է հայ եկեղեցու նորապսակ իշխանավորներին և սրտագին բարեմաղթում, որ տ. Գյուտ, տ. Արսեն, տ. Նարեկ, տ. Գևորգ սրբազանները հետայսու էլ անմնացորդ նվիրումով ծառայեն Վեհափառ Հայրապետի օրհնության և ղեկավարության ներքո՝ ի պայծառություն Մայր Աթոռ ս. Էջմիածնի, Հայց. պառք. սուրբ եկեղեցու և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի: